

ԱՀ զՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ՁՆԱՀԱՏՈՒՄ
6 -ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մ Ա Յ Ր Ե Ն Ի

ԹԵՍՏ 2

Շրջան, քաղաք _____

Ուսհաստատություն _____

Դասարան _____

ԱԱՀ _____


Ամսաթիվ _____

Սիրելի՛ աշակերտ

Թեստ-գրքույկն ընդգրկում է 21 առաջադրանք:

1-4-րդ, 10-րդ, 13-րդ և 21-րդ առաջադրանքները լրացնել:

5-րդ, 9-րդ և 16, 17-րդ առաջադրանքներում կատարել համապատասխանեցում:

6-8-րդ, 11, 12-րդ, 14, 15-րդ և 18-20-րդ առաջադրանքներում տրված են պատասխանի տարբերակներ: Պահանջվում է ճիշտ պատասխանի համարը (համարները) վերցնել շրջանակի մեջ: Եթե գտնում եք, որ սխալ եք նշել, նշված պատասխանի համարի վրա դնում եք X նշանը  և նոր շրջանակի մեջ վերցնում ճիշտ պատասխանի համարը:

Թեստ-գրքույկի յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, սխալը՝ 0:

Թեստ- գրքույկի առավելագույն միավորը՝ 21:

Աշխատանքի կատարման համար տրվում է 50 րոպե:

Ցանկանում ենք հաջողություն

2018 - 2019

Թեստ 2
1-4-րդ առաջադրանքները լրացնել

1. Հիմնական բառապաշարը բնորոշ է _____

2. Բառերը ըստ իմաստի և ձևի հարաբերության լինում են՝ _____

3. Բառի սովորական իմաստը կոչվում է _____
4. Արտահայտությունը գրել մեկ բառով:
Վիրահատություններ կատարող բժիշկ - _____
5. Համապատասխանեցնել.

Բառ

- 1) քաղաք
- 2) երջանիկ

Ածանց

- ա) ուկ
- բ) ավետ
- գ) ություն
- դ) ային

Պատասխան՝ 1-____, 2-____

6. *Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:*

Ո՞ր շարքի բոլոր բառերի ուղղագրությունն է ճիշտ:

- | | |
|-----------------------------------|---------------------------|
| 1) աներես, այժմէական, երբեկիցէ | 3) ինչևե, որկիցէ, գրեթե |
| 2) ամենաէական, անէանալ, մանրէաբան | 4) նախօրէ, միգուցե, փայտե |

7,8-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի բոլոր համարները վերցնել շրջանակի մեջ

7. Ո՞ր բառերում է գրվում *-բ-*:

- 1) դար...ին, 2) ար...ի, 3) հար...ել, 4) համ...երել, 5) հղ...անալ

8. Ո՞ր բառերում է արտասանվում չգրվող *-ը-* հնչյունը:

- 1) ջրհոր, 2) կատարածու, 3) վայրկյան, 4) վարդաստան, 5) թանձր

9. Համապատասխանեցնել.

Բառ

- 1) ճանկ...ել
- 2) դժո...ք
- 3) վեր...ին
- 4) հեղ...ուցիչ

Տառ

- ա) *ր*
- բ) *ջ*
- գ) *ռ*
- դ) *ղ*
- ե) *խ*
- զ) *չ*
- է) *ծ*
- ը) *ց*

Պատասխան՝ 1-____, 2-____, 3-____, 4-____

10. Լրացնել.

«Պապն ու թռռը» ստեղծագործության հեղինակն է _____:

11,12-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:

11. Ո՞ր բառն է համապատասխանում նախադասությանը:

3-րդ դարում Փայտակարանն 1) ընդգրկված, 2) ընկրկված է եղել Մեծ Հայքի կազմում:

12. Ընտրել այն բառը, որը նախադասության մեջ կունենա փոխաբերական իմաստ:

- Անտրտունջ է 1) բարձր ուռին՝ կանգնած առվի եզրին:
- 2) դալար
- 3) լալկան

13. Լրացնել աղյուսակը.

Գրել տրված բառերի խոսակցական տարբերակը:

Գրքային	Խոսակցական
եղջյուր	
դժգոհել	
խնջույք	

14,15-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

14. Նրա բռում հանկարծ

Հատիկները բոլոր

Մարգարիտներ դարձան:

Բանաստեղծական տողերը գրել է

- 1) Հովհաննես Շիրազը
- 2) Վահան Տերյանը
- 3) Վարդգես Բաբայանը
- 4) Եղիշե Չարենցը

15. Նստել ես լուռ ու տխուր, հին օրերն ես հիշում այն,

Որ եկել են ու անցել, մայր իմ անուշ ու անգին:

Եվ հիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց.

.....

Բաց թողած տողն է՝

- 1) Ո՞ւր է արդյոք հիմա նա, ո՞ղջ է արդյոք, թե՞ մեռած...
- 2) Ո՞ւր է արդյոք հեռացել, մայր իմ անուշ ու անգին...
- 3) Եվ ի՞նչ դռներ է ծեծել, մայր իմ անուշ ու անգին...

16,17-րդ առաջադրանքներում կատարել համապատասխանեցում

16. **Դարձվածք** **Բացատրություն**
- | | |
|--|---|
| 1) աշխարհ գալ
2) աշխարհ տեսնել
3) մեջք մեջքի տալ
4) սիրտ անել | ա) շատ երկրներ շրջել
բ) համարձակվել
գ) ճանապարհ գնալ
դ) ուշադիր լինել մեկի նկատմամբ
ե) իրար օգնել
զ) ծնվել |
|--|---|
- Պատասխան՝ 1- ____, 2- ____, 3- ____, 4- ____

17. **Ստեղծագործություն** **Հեղինակ**
- | | |
|--|--|
| 1) « Առաջին հուշ »
2) « Աստղեր »
3) « Հորս հիշատակին » | ա) Հ. Շիրազ
բ) Վ. Բաբայան
գ) Վ. Անանյան
դ) Մ. Սարյան
ե) Վ. Դավթյան |
|--|--|
- Պատասխան՝ 1- ____, 2- ____, 3- ____

18-20-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի բոլոր համարները վերցնել շրջանակի մեջ

18. Իմաստով ճիշտ բացատրված բառերն են՝
- 1) զենիթ- երկնականարի ամենաբարձր կետը, 2) հախուռն- սակավ, քիչ, 3) աղվամազ-բարակ մազ, 4) գույժ- լավ, բարի լուր, 5) անպածրար- ամպերով պատած

19. **Քաղմիմաստ բառերն են՝**
- 1) սղոց, 2) ատամ, 3) ոսկի, 4) բույս, 5) սոսինձ

20. **ջանասեր բառին հականիշ են՝**
- 1) փութաջան, 2) տքնաջան, 3) ավարա, 4) ծույլ, 5) զորավիզ

21. **Գրել պատասխանը:**

Ո՞ր ստեղծագործությունից է մեջբերումը:

Կույր աղբյուրի մոտ, որտեղ ճամփաբաժանն էր, շունը կանգնել էր. սպասում էր մեզ: Աղբյուրը Կույր էր կոչվում, որովհետև իր խորքերից նա մանրահատիկ ավազ էր հանում, ավազը փակում էր նրա ակը: Աղբյուրը դարձյալ լցվել էր մանրահատիկ ավազով ու տիղմով. գետնի տակ աղբյուրը գուցե խեղդվում էր:

Պատասխան՝ _____

Լրացնում է ստուգողը

Ընդհանուր միավորը	
Գնահատականը 10 բալանոց սանդղակով	

Ստուգող՝ _____ Ա.Ա.Հ ստորագրություն